Հավելված N 39
Հաստատված է
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գլխավոր քարտուղարի
2020 թվականի սեպտեմբերի 24 - ի N 609 - Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1.Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) սպորտի քաղաքականության վարչության (այսուհետ՝ Վարչություն) զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 18-34.16-Մ2-3):

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի գլխավոր մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3.Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ.Սարգսյան3, Կառավարական շենք N 2

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) իրականացնում է զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բնագավառի օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները,

2) իրականացնում է զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բնագավառում հայեցակարգերի ու պետական նպատակային ծրագրերի մշակման աշխատանքները,

3) իրականացնում է բաժնի իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքները.

4) իրականացնում է հանրապետությունում բնակչության ֆիզիկական դաստիարակության գործի կազմակերպման աշխատանքների մեթոդական և զանգվածային սպորտի աշխատանքների վիճակագրական հաշվառումը.

5) իրականացնում է զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության ոլորտների քարոզչությունը.

6) իրականացնում է պետական կառավարման տարածքային մարմինների հետ համատեղ զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստարակության տարածքային քաղաքականության իրականացումը.

7) իրականացնում է ազգային սպորտային խաղերի տարածմանն ու զարգացմանն ուղղված սպորտաժամանցային գործունեության բազմազանության ապահովումը.

8) իրականացնում է զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բնագավառներում օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մշակման աշխատանքները,

9) իրականացնում է միջազգային սպորտային կազմակերպությունների հետ տարվող աշխատանքները զանգվածային սպորտի և ադապտիվ սպորտի բնագավառներում.

10) իրականացնում է զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիրակության բնագավառների հանրապետական մարզական բնույթի ծրագրերի մշակման աշխատանքները.

11) իրականացնում է գիտաժողովների, համաժողովների, սեմինարների (այդ թվում՝ միջազգային) և այլ միջոցառումների կազմակերպման, ծրագրեր մշակման աշխատանքները ֆիզիկական կուլտուրայի և զանգվածային սպորտի բնագավառում.

12) մշակում է վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) վարման համակարգ.

13) իրականացնում է զանգվածային սպորտի զարգացման և ֆիզիկական դաստիարակության հանրապետական նպատակային ծրագրերի աշխատանքները:

Իրավունքները՝

- իրականացնել մասնագիտական քննարկումներ զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բնագավառում, ընդգրկելով համապատասխան մարմինների և/կամ ստորաբաժանումների մասնագետներին,
- նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներից ստանալ հիմնավորումներ, պարզաբանումներ և տեղեկատվություն՝ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսային ծրագրի և ՀՀ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորվող ծրագրերի վերաբերյալ.
- բաժնի գործառույթներից բխող ՀՀ միջազգային պարտավորությունների վերաբերյալ տվյալների պարբերաբար հավաքագրում և միջազգային (սահմանված կարգով նաև սփյուռքի) սպորտային կազմակերպությունների հետ համագործակցություն.
- հայեցակարգերի մշակման համար պահանջված անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա տեղեկատվության հավաքագրման աշխատանքներ.
- զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բնագավառի նպատակային ծրագրերին համապատասխան տեղեկատվական, գիտահանրամատչելի, գիտամեթոդական, ուսումնական, գիտական, վերլուծական բնույթի նյութերի հավաքագրման աշխատանքներ.
- ձևավորել աշխատանքային խմբեր, հանդես է գալ օրենսդրական, հայեցակարգային, ծրագրային և այլ բնույթի նախաձեռնություններով ու առաջարկություններով.
- պահանջել տեղեկատվական և վիճակագրական տվյալներ մարզական կազմակերպություններից.
- համապատասխան շահագրգիռ մարմիններից ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ զանգվածային սպորտի հիմնախնդիրների ու դրանց լուծման վերաբերյալ.
- ՏԻՄ համապատասխան ստորաբաժանումներից մասսայական սպորտի բնագավառի վերաբերյալ պահանջել ՀՀ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ տեղեկատվություն:

Պարտականությունները՝

- իրականացնել ուսումնասիրություն և վերլուծություն ոլորտի զարգացման հեռանկարային միտումների, քաղաքականության իրականացման, հայեցակարգային և ռազմավարական մոտեցումների վերաբերյալ.
- ընդհանրացնել իրավական ակտերի գործնական կիրառումն ու ներկայացնել առաջարկություններ սպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.
- վերլուծել, ուսումնասիրել զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բնագավառներում՝ քաղաքականության վերլուծության, քաղաքականության միտումների և օրինաչափությունների ուսումնասիրման աշխատանքները, ինչպես նաև քաղաքականության ռազմավարության, հայեցակարգերի ու նպատակային ծրագրերի մշակման օրինաչափությունները.
- համապատասխան ռեգիստրների միջոցով վարել զանգվածային սպորտի բնագավառներում վարչական վիճակագրությունը, իրականացնել ադապտիվ մարզական կազմակերպությունների հաշվառումը և ադապտիվ սպորտի վարչական

վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) վարման համակարգի ստեղծման աշխատանքները.

- Իրականացնել զանգվածային սպորտի զարգացման և ֆիզիկական դաստիարակության հանրապետական նպատակային ծրագրերի աշխատանքների մոնիթորինգ.
- Կյանքի առողջ, բարենպաստ պայմանների ապահովման, հիվանդությունների նվազեցման և կանխարգելման, ինչպես նաև ժամանցի, ակտիվ հանգստի կազմակերպման աջակցում.
- Նախատեսված ժամկետում վարչության պետին ներկայացնել իրականացրած ռազմավարական ծրագրերի, հայեցակարգերի մշակման համար ներկայացված փաստաթղթերի, տեղեկատվության ուսումնասիրության և վերլուծության արդյունքները.
- քաղաքացիների նամակների (դիմումներն ու բողոքները) վերաբերյալ իրականացնել քննարկում և նպաստել դրանցում արծարծված հարցերի լուծմանը.
- զանգվածային սպորտի բնագավառում իրականացվող պետական նպատակային ծրագրերի, մարզական զանգվածային միջոցառումների մասին տեղեկատվության լուսաբանում տարատեսակ լրատվական միջոցներով.
- ներկայացնել մասնագիտական կարծիք և մեթոդական պարզաբանումներ բաժնի գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի վերաբերյալ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1.Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ սպորտի կամ ֆիզիկական կուլտուրայի բնագավառում երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1.Բանակցությունների վարում
2. Բողոքների բավարարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում

4.Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորություններ

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումներ և ներկայացուցչություն

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծման: